

ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՏԱՐԵԼԻՑԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ապրիլի 24-ին, ուրբաթ.—Յիշատակ բիւրաւոր նահատակացն մերոց, որք կատարեցան յընթացս Համաշխարհային առաջին պատերազմի, յԱրևմըտեան Հայաստան:

Ապրիլի 24: Այսօր հայազգի զավակները իբրև ուխտավոր ուղղվում են դեպի Ծիծեռնակաբերդի Նահատակաց հուշարձան՝ իրենց հարգանքի տուրքը մատուցելու անմեղ զոհերի անմեռ հիշատակին:

Համազգային ուխտի օր է այսօր: Ամեն մի հայ, աշխարհի որ անկյունում էլ գտնվելիս լինի, ոգեկոչում է իր անմեղ արյունակիցների նահատակությունը:

Ապրիլյան եղեռնի 77-րդ տարելիցն է:

Այսօր, ապրիլի 24-ին, ժամը 10.30-ին, Մայր Աթոռի միաբանությունը, գլխավորությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի, այցելեց Ծիծեռնակաբերդ և խաչակիր ծաղկեպսակ դրեց Նահատակաց հուշարձանին:

Հուշակոթողի անմար կրակի շուրջ կատարվեց հոգեհանգստյան հանդիսավոր արարողություն, երգվեցին «Գթա Տէր» և «Ի վերին Երուսաղէմ» շարականները, որից հետո Վեհափառ Հայրապետը «Հոգւոց» արտասանեց նահատակների հիշատակին:

Նոյն օրը, ժամը 11-ին, Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, հանդիսավոր ս. պատարագ մատուցեց Տ. Միքայել վրդ. Աջապահյանը: «Հայր մեր»-ից առաջ միսիթարական և սրտառուչ քարոզ խոսեց Հայոց Հայրապետը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. Ամէն»:

«Քրիստոս, Որդի Աստուծոյ անոխակալ և բարեգութ, հոգւոցն հանգուցեալ նահատակացն մերոց արա հանգիստ և ողորմութիւն»:

Սիրելի հավատացյալ ժողովուրդ, այսօր վերստին այս մեր տաճարի կամարների ներքո հավաքվել ենք աղոթելու համար մեր բյուրավոր նահա-

տակների հոգիների հանգստյան և խաղաղության համար: Եվ այսօր ինձ համար բացառիկ հոգեկան մխիթարություն է, որ մեր այս աղոթքի պահին մեզ հետ են հեռու աշխարհներից եկած բարեկամներ, գլխավորությամբ Մեծ Բրիտանիո Լոնդոնից ժամանած Ռոբերտ Ռանսի արքեպիսկոպոսի, նախկին արքեպիսկոպոսը Քենթրբերիի, որ տևապես մնայուն բարեկամն է մեր սուրբ Եկեղեցու և ժողովրդի, և անձնապես մեր մասնավոր ուրախությունն եմ նկատում ինձ համար, որ նա նաև մեր հոգևոր եղբայրն է: Մենք բազում անգամ եղել ենք միասին անցյալում, մանավանդ Լոնդոնում, մեր Ս. Էջմիածնում՝ մեկ կամ երկու անգամ: Եվ որ այսօր եկած են նաև անգլիացի ազնիվ անձնավորություններ, քաղաքացիներ, որոնք ժամանած են Հայաստան բարեգործության առիթով: Ինչպես գիտեք երևի, Անգլիո հայ գաղութը «Հայաստանի օգնություն» կոչված մի կազմակերպություն ստեղծեց երկրաշարժից հետո: Եվ գործակցությամբ մանավանդ Անգլիո կառավարության հետ և նրանց գիտական լայն միջոցներով արդեն հիվանդանոցից հետո նաև Կիրովականում կկառուցվի մի հիվանդանոց երեխաների, որի բացումը վաղը տեղի պիտի ունենա, և այնտեղ էլ միասին պիտի լինենք երևի:

Անհավասիկ մեծ խումբը քառասուն կամ հիսուն հոգի պաշտոնական անգլիացի մարդկանց և հայ գաղութի ներկայացուցիչներից այստեղ են գտնվում մեր աղոթքի այս պահում:

Կար ժամանակ, տարիներ առաջ, իմ երիտասարդության շրջանին, Բուխարեստում ևս, ինչպես ամեն տեղ, ապրիլ 24-ի նահատակների տարելիցը նշվում էր: Երբեմն տպավորությունը ունենում էինք, որ երևի շատ տարիներ որ անցնեն, հայ ժողովուրդը պիտի մոռանա իր մեծ վիշտը և գուցե պիտի մխիթարվի մեր այսօրվա միայն իրողություններով հայկական կյանքի: Այսպիսի տպավորություն ունեի, հիշում եմ, երբեմն ես: Բայց ով հրաշք զարմանալի և անսպասելի: Ընդհակառակը, որքան տարիները ավելացան, ինչքան հեռացավ 1915 թվականի այդ արյունոտ տարին, ընդհակառակը այնքան արթնացավ, կենդանություն ստացավ հիշատակը հայ ժողովրդի գիտակցության մեջ, հայ ժողովրդի հոգեկան աշխարհի մեջ, ամբողջ աշխարհում, ինչպես նաև Հայաստանում, մանավանդ Եղեռնի հիսունամյակից այս կողմ, ինչպես կհիշեք: Զարմանալի երևույթ է սա, գուցե անսպասելի շատերի համար, բայց հիշողություն մը, որ անշուշտ կպարունակի մեծ հոգևոր բարոյական խորհուրդ՝ ի պատիվ մեր քրիստոնյա ազգին, որ հավատում է, որ մահվամբ մահը կարելի է հաղթել և փառավորել միշտ վերածնված և վերածնվող կյանքը: Այսպես է, որ մանավանդ այս վերջին մի քանի տարիներին, երբ համայն մեր ժողովուրդը ազգային ազատագրական պայքարի նոր շրջան է ապրում, մեր ժողովուրդը, որ իրականացրեց մեծ երազը մեր ազգային՝ իր հայրենի անկախությունը հռչակելով ահա մեկ տարի առաջ: Մենք հետզհետե առավել գիտակցում ենք, որ մեր նահատակները մեռան, բայց չկորան: Եվ մեր պարտականությունն է, իբրև քրիստոնյա և իբրև հարազատ ժողովրդի զավակներ, չմոռանալ նրանց հիշատակը: Աշխարհի վրա ամեն մեկ հայ մարդ, ուր էլ ապրելիս լինի, հեռավոր կամ մոտակա մի ազգական ունի նահատակված 1915—1916 թթ. Տեր Զորի ճանապարհի վրա և Սուրիո անապատների մեջ անասելի տառապանքներու ենթարկված: Մոտ երկու միլիոն մեր ժողովրդի զավակներ նահատակվեցին ոճրագործ ձեռքով օսմանյան կառավարության այդ շրջանին: Ինչպես կարելի է մոռանալ, ինչպես կարելի է հաշտվել այն ոճրի հետ, որ ցեղասպանության սկիզբը դրավ մեր 20-րդ դարում: Ավելին, մեր նահատակները ոչ թե մենք չենք

ԴԻՏԵՄԻՆԻՆԵՐԻ ՀԵՏ ԿՈՒՏՏՈՒՂԻՑ ՀՈՎԵՐՑՈՒՄ ԱՐՄԱՆ ԱԿԱԿԻ ԺՈՒՌՆԱԼԻՍՏՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՎԱՐՉԱՊԵՏ ԼԵՌ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԵՎ ՆՐԱ ՏԻԿՆՈՋ ԿԱՐԻՆԵ ՊՈՒՇԿԻՆԻ ՀԵՏ
(24 ապրիլ 1992 թ.)

ՄՈՎՍԵՍՅԱՆ ԴԱ ԿՈՌՈՆԱՎԱՌՈՒԹՅԱՆ ՍԱՀԵՂՆ ԻՎ ՆՏՎԵՌՈՒԹՅԱՆ ՎՈՓՈՒՂԻ

ԴԱՎԱՌՅՈՒՆՎԱՇ ՑՈԿՈՏՈՂՈՒ ԵՈՂ ՎԵՆՅՎԱԿՈՒՂՎՎԱԶ

(24 ապրիլ 1992 թ.)

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՆԱՀԱՏԱԿԱՑ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ԱՌՋԵՎ
(24 ապրիլ 1992 թ.)

մոռացել կամ չենք մոռանալու, այլ նրանք այսօր, մանավանդ մեր ներկա այս պայքարի շրջանին, մեզ ավելի ոգեշնչում են, մեզ զորավիգ են կանգնած երկնքից և առաջնորդում են մեզ դեպի նրանց իդեալների իրականացումը այս երկրի վրա: Նրանք նույնպես, ինչպես այսօր, Արցախի բարձունքներում, զոհվեցին հանուն ազգի գոյատևման և հանուն հավատքի: Եվ նրանց ոգիները լուսավորում են մեր կյանքի ճանապարհը դեպի ապագան:

Վստահությամբ, բացարձակ վստահությամբ ասենք, որ Արցախյան դատը պետք է հաղթանակով պսակվի:

Այո, նաև մեր օրերում, մեր հայկական Արցախում, հենց երեկ, գուցե այսօր, այս պահին, երբ խոսում ենք մենք այստեղ, այնտեղ քաջամարտիկ զինվորներ նվիրաբերում են իրենց կյանքը իրենց մայր երկրի՝ Արցախի ազատության և գոյատևման համար: Նրանք պայքարում են ազնիվ գիտակցությամբ, որ ավելի լավ է ազատ մեռնել, քան թե ստրուկ ապրել:

Մեր ժողովուրդը բարոյական արժեքներ պաշտող ժողովուրդ եղած է և սակարկության չի մտած երբեմն իր կյանքը զոհելու հանուն բարոյական արժեքների, հանուն քրիստոնեական հոգևոր արժեքների:

Մենք չենք փոխված, նույն ժողովուրդն ենք և միևնույն ոգով, վստահեմ, պետք է ապրենք երկնքի տակ՝ մեր ճակատը բարձրացրած դեպի երկինք՝ աղոթքով, հույսով և վճռականությամբ ծառայելու մեր Եկեղեցու անսասանության համար, մեր ժողովրդի կյանքի գոյատևման համար, մեր հայրենիքի հետզհետե առավել զորացման և ամրապնդման համար, անկախության փառավոր ճանապարհի վրա:

Ահա այս խոհերը, այս մտածումները ես ուզեցի ձեզի բաժնել, որոնք բխում են իմ սրտից, և հրավիրել ձեզ ամենքդ, որ քիչ հետո անցնենք մեր Էջմիածնի հողամասի վրա կառուցված Նահատակաց հուշարձանի առջև և այնտեղ մեկ անգամ ևս մաղթենք մեր անմեղ բյուրավոր նահատակների հոգիների խաղաղության և հանգստյան համար:

Թող Տերը միշտ օրհնի նրանց հիշատակը, կենդանի պահի այդ հիշատակը մեր աշխարհի մեջ իբրև առաջնորդող հոգի մեր կյանքում, և թող Աստված պահի, պահպանի անփորձ ու անվտանգ մեր նորաստեղծ Հայաստանի Հանրապետությունը, հարազատ մեր հայրենիքը, հավիտենական Հայաստանը. այժմ և միշտ. ամեն:

Սրբազան պատարագին մասնակցում էին բազմաթիվ ուխտավոր հայեր Հայաստանից և Սփյուռքից:

Հավարտ ս. պատարագի, Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ, եկեղեցական թափորն առաջնորդվեց դեպի Մայրավանքի շրջափակում վեր խոյացած Մեծ Եղեռնի զոհերի հուշարձան, ուր հոգևոր շարականների երգեցողությամբ կատարվեց հոգեհանգստյան հանդիսավոր պաշտոն:

* * *

Նույն օրը, ժամը 15-ին, Ս. Էջմիածնի տոգևոր ճեմարանի ուսանողությունն այցելեց Ծիծեռնակաբերդ և թարմ ծաղիկներ զետեղեց Նահատակաց հուշարձանին: